ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000064

Ձեռնարկողը՝ ***«Էկոքիմսինթեզ» ՍՊԸ***
Ք. Երևան, Թումանյան

Գործունեությունը՝ ***Դիզելային վառելիքի ծծմբազերծման արտադրամասի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000064

<<24>> 08 2020թ.

Դիզվառելիքի ծծմբազերծման արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Էկոքիմսինթեզ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ ՇՄԱԳ հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Ա կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևանի Էրեբունի վարչական շրջան
Արին-Բերդի 3-րդ նրբ, հ. 6/2

«Էկոքիմսինթեզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիզվառելիքի ծծմբազերծման արտադրամասի նախագիծն իրականացվելու է Երևան քաղաքի Էրեբունի վարչական տարածքի Արին-Բերդ 6/2 հասցեում՝ արտադրական գոտում: Այն իրականացվելու է վարձակալության հիմունքներով՝ նախկին ասֆալտի գործարանի գոյություն ունեցող մասնաշենքում:

Գործունեության նպատակն է՝ դիզվառելիքի արդիական տեխնոլոգիաների ներդրմամբ ստանալ բարձր որակի դիզվառելիք (գուդրոն):

Նկարագրական մաս. Համաձայն հաշվետվության՝ նախկինում կառուցված ասֆալտգործարանի տարածքն ամբողջությամբ խախտված է: Արտադրական հրապարակի մի մասը բետոնապատված է, որոշ մասը՝ կանաչապատված: Կանաչապատ հատվածում աճում են դեկորատիվ և պտղատու ծառեր: Առկա են մարդու հարևանությամբ ապրող թռչուններ՝ ճնճղուկ, մոխրագույն ագռավ և այլն: Նախատեսվող գործունեության իրականացման և հարակից տարածքներում՝ պայմանավորված խիտ կառուցապատված լինելու հանգամանքով ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Էրեբունի վարչական շրջանի կլիման ցամաքային է՝ շոգ ամառով և ցուրտ ձմեռով: Տեղումների միջին տարեկան նորման կազմում է 316մմ: Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին կազմում է 7.2 մ/վրկ: Տարածքը պատկանում է III սեյսմիկ գոտուն, Amax = 0.4q սպասվող առավելագույն արագացմամբ:

Անմիջապես նախագծվող արտադրամասի տարածքում գրունտային ջրերի մակարդակը տատանվում է 20-30 մ-ի սահմաններում:

Դիզելային վառելիքի արտադրամասը տեղադրվելու է բետոնե հատակ և դրենաժային համակարգ ունեցող շինության առանձին արտադրամասում՝ 1500մ² մակերես տարածքում: Արտադրամասին կից գտնվող 300մ² մակերեսով շինությունն օգտագործվելու է որպես

պահեստ: Արտադրամասի հարակից տարածքում՝ «Էկո Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կազմակերպել ավտոմեքենաների բանեցրած կուտակիչների վերամշակման արտադրամաս: Գործունեության տարածքից 453մ հեռավորության վրա գտնվում է «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ-ն (ներկայումս չի գործում): Գործունեության տարածքը գտնվում է մոտակա Երեբունի բնակելի թաղամասից՝ 1.4-1.8կմ, դպրոցից՝ 1.85կմ, մանկապարտեզից՝ 1.95կմ, պատմաճարտարապետական «Երեբունի» թանգարանից՝ 4կմ, «Խարբերդ» թաղամասի ամենամոտ բնակելի շենքից՝ 1.4կմ հեռավորությունների վրա: Վարձակալվող տարածքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման էլեկտրամատակարարման և գազամատակարման համակարգերով:

Ըստ հաշվետվության՝ այն մշակվել է գործող նորմերի[1,2], ՀՀ բնապահպանական օրենսդրության, ՀՀ Կառավարության որոշումների, նախարարների հրամանների, գործող մեթոդակարգերի հիման վրա:

Դիզելային վառելիքի որակը հիմնականում կախված է դրանում ծծմբի պարունակությունից: Վերամշակման ենթակա հումքի ընդհանուր զանգվածում ծծմբի պարունակությունը կազմում է 0.27%: 2009թ.-ից թույլատրվում է օգտագործել ծծմբի՝ մինչև 10ppm պարունակությամբ դիզվառելիք, Մաքսային միության տեխնիկական ռեգլամենտի շրջանակներում՝ K5 դասի էկոլոգիական վառելանյութ: Ընկերությունը նախատեսում է դիզելային վառելիքի ծծմբազերծման համար կիրառել նոր արդիական կատալիտիկ ծծմբազերծման տեխնոլոգիայով՝ HXC կայանք, որը ջրածնի օգտագործում չի նախատեսում և թույլ է տալու դիզվառելիքի վերամշակման արդյունքում ստանալ բարձր որակի դիզվառելիք, գուդրոն: Ընկերության կողմից ընտրված տարբերակի՝ նոր կատալիտիկ ծծմբազերծման տեխնոլոգիայի կիրառումը, հնարավորություն է ստեղծելու դիզվառելիքում ծծմբի պարունակությունն իջեցնել մինչև 10ppm:

Նախատեսվող գործունեության կատարման համար հումքի մատակարարումն իրակա-նացվելու է ՌԴ երկաթգծով, իսկ որոշ մասը ներկրվելու է նաև Իրանից՝ ավտոմեքենաներով: Ներմուծվող հումքը պահեստավորվելու է 50տ տարողության, հերմետիկ փակվող 4 մետաղյա ցիստեռներում:

Համաձայն հաշվետվության՝ կայանքի տարեկան արտադրողականությունն, ըստ դիզելային վառելիքի հումքի՝ կազմում է 1800տ/տարի: Ծծմբազերծման արդիական տեխնոլոգիան իրականացվում է ադսորբցիոն եղանակով՝ ծծումբ պարունակող միացումների օքսիդացում մինչև սուլֆոններ և դրանց հետագա ադսորբում: Այն հնարավորություն է տալու գործնականորեն բացառել ծծմբական անհիդրիդի արտանետումները: Գործունեության իրականացման արդյունքում ստացվելու է երկու տեսակի ապրանք՝ ծծմբի նվազ պարունակությամբ դիզվառելիք և հիմնական արտադրանքին զուգընթաց՝ ծծմբով հագեցած խտանյութ կամ գուդրոն: Դիզելային վառելիքի ծծմբազերծման գործընթացը կատարվելու է երկու փուլով: Առաջին փուլում կատարվում է թթվայնացում՝ հեղուկ ֆազային HXC կատալիզատորի ավելացմամբ, երկրորդ փուլում՝ ծծմբային միացումների ադսորբում և սորբենտի վերականգնում (ռեգեներացում): Ադսորբերները լցվում են 2.8-7.0մմ չափեր ունեցող սիլիկագելով: Օքսիդացման գործընթացը ընթանում է 20-40°C ջերմաստիճանի պայմաններում՝ 4 մթն ճնշման տակ: Ադսորբերում կատարվում է ծծումբ պարունակող միացությունների ադսորբում և մաքրված դիզվառելիքը դուրս է բերվում ադսորբերից: Ադսորբման տևողությունը կազմում է 24 ժամ, որից հետո 1-ին ադսորբերը անջատվում է՝ նախապատրաստվում ռեգեներացիայի: Այնուհետև միանում է 2-րդ ադսորբերը, որտեղ ազոտի ճնշմամբ կատարվում է նոր չափամասով դիզելային վառելիքի լիցքավորում: Ադսորբերը մինչև ռեգեներացիան հեղուկազերծում են: Ադսորբերի ելքում ջերմաստիճանը կազմում է 80°C և ավելի: Ադսորբերը ճնշման տակ դատարկելուց հետո՝ օդափչում են

ազոտով: Օդափչումից հետո գազն ուղղվում է օդասառեցման սարք, այնուհետև՝ զատիչ և խողովակով արտանետվում մթնոլորտ: Դեպի ադսորբեր ազոտի մատակարարումը դադարեցնելուց հետո, կոմպրեսորով տաքացած օդը մղում են ադսորբեր՝ աստիճանաբար բարձրացնելով ջերմաստիճանը մինչև 540°C: Ռեգենարացիայի արդյունքում զտիչը մաքրում են, սորբենտի վրա նստած ծծմբի միացությունները դեսորբվում, ստանալով զուգընթաց պատրաստի արտադրանք՝ վառարանային վառելիք կամ գուդրոն, որը հումք է հադիսանում բիտումի ստացման համար: Համաձայն հաշվետվության՝ այն թափոն չէ և ենթակա է վաճառքի: Վառարանային վառելիքը կուտակվելու է 10տ ցիստեռներում՝ հետագայում սպառողին հանձնվելու նպատակով:

Արտադրամասն աշխատելու է տարեկան 360 օր՝ երեք հերթափոխով: Նախատեսվող գործունեության իրականացման համար ստեղծվելու են 17 նոր աշխատատեղեր:

Կայանքի շահագործման ընթացքում առաջանալու են արտադրական թափոններ, որոնք համապատասխանում են բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանին կից ցանկի [22]՝ վտանգավորության 3-րդ և 4-րդ դասերին պատկանող թափոնատեսակներին.

- հատկությունները կորցրած ճենապակե գնդեր՝ 0.475 տ/տարի (առաջանում են տարին 1 անգամ), ծածկագիր՝ 31400710 01 00 4 (խեցեգործական, սանիտարական իրերի ջարդոն),
- բանեցված ադսորբենտ (5,7տ) (սիլիկագել), որը փոխվում է 2 տարին 1 անգամ, ծածկագիր՝ 59500700 01 01 4,
- բանեցված կոմպրեսորային յուղեր, ծածկագիր՝ 54100211 02 03 3,
- տեխսպասարկման և պլանային վերանորոգումների ժամանակ օգտագործված յուղոտված լաթեր, ծածկագիր՝ 58200600 01 01 4:

Ճենապակե գնդերն արտահանվելու են կենցաղային աղբի հետ, կամ ուղարկվելու են խեցեգործական, շինանյութեր արտադրող ձեռնարկություններին՝ որպես երկրորդային հումք: Բանեցված ադսորբերն ուղարկվելու է վերամշակման՝ ապակեգործական, ճանապարհային ծածկ կամ շինանյութեր արտադրող ձեռնարկություններին՝ որպես երկրորդային հումք:

Բանեցված յուղերը հավաքվելու են հերմետիկ փակվող մետաղյա տակառներում, պահվելու են հատուկ առանձնացված հարթակում՝ մետաղական տակդիրների վրա: Թափոններն ամբողջությամբ օգտագործվելու են արտադրամասում՝ ծծմբազերծման կայանքում, որպես երկրորդային հումք:

Յուղոտված լաթերը կուտակվելու են մետաղյա տարաներում և արտահանվելու են կենցաղային աղբի հետ միասին: Առաջանալու է նաև 1.28մ³/տարի կենցաղային աղբ, որը կուտակվելու է տարածքում առկա աղբամանների մեջ և տեղական կառավարման մարմինների համաձայնությամբ պարբերաբար տեղափոխվելու է աղբավայր:

Համաձայն հաշվետվության՝ գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է բնառեսուրսներից՝ ջուր և բնական գազ: Կայանքն աշխատելու է բնական գազով, որի ծախսը կազմելու է 233280մ³/տարի:

Ջուրն օգտագործվելու է արտադրամասում տեխնոլոգիական (լաբորատորիա՝ 3964.3մ³), աշխատողների խմելու և կենցաղային կարիքների համար(1535.7մ³), ընդամենը՝ տարեկան 5500.0մ³ թարմ ջուր: Դիզվառելիքի մշակման արտադրամասում ջուրն օգտագործվելու է սարքավորումների հովացման համար՝ ջրի շրջանառու համակարգով: Աշխատակիցներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից: Արտադրամասի ջրամատակարարման օղակաձև ցանցի վրա տեղադրվելու են հակահրդեհային հիդրանտներ: Նախատեսվող գործունեության տեխնոլոգիական գործընթացում արտադրական արտահոսքեր չեն առաջանալու, ինչը պայմանավորվորված է արտադրամասի փակ շրջանառու համակարգով աշխատելու է հետ: Մթնոլորտային հոսքերը

արտիրապարակից դրենաժային ցանցով ուղղվելու են քաղաքային հեղեղային կոյուղու կոլեկտոր:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու են տնտեսա-կենցաղային և արտադրական(լաբորատորիա) կեղտաջրեր՝ 690,0մ³/տարի քանակով, որոնք լցվելու են տարածքում գոյություն ունեցող կոյուղացանց: Հաշվետվությունում ներկայացված է կոյուղու ցանց ուղղվող կեղտաջրերի կազմը և բաղադրությունը՝ համապատասխան ցուցանիշներով (կախված մասնիկներ, նավթամթերքներ, յուղեր, սուլֆիտներ, քլորիդներ, նիտրատներ, ամոնիակ, լվացող սինթետիկ նյութեր, որոնք պարունակում են բարձր ԹՔՊ և ՔԿՊ): Հաշվետվությունում կատարվել է աղտոտող նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքերի (ԹՍԱ) չափաքանակների հաշվարկ՝ համաձայն շրջակա միջավայրի նախարարի N464-Ն հրամանին կից՝ Հավելված 1-ում տրված մեթոդակարգի [15]: Համաձայն հաշվետվության՝ արտադրամասի շահագործման հետևանքով քաղաքային կոյուղու կոլեկտոր են թափվելու տարեկան 0.485 տ աղտոտող նյութեր: Կատարվել է կոյուղու ցանց ուղղվող արտադրամասի կեղտաջրերի միջին կշռային բաղադրության (կոնցենտրացիաները գ/մ³)՝ Երևան քաղաքի աերացիայի կայան մուտք գործող կեղտաջրերի համար հաստատված թույլատրելի նորմերի հետ համեմատական վերլուծություն: Ըստ հաշվետվության՝ վերջիններս գտնվում են Երևան քաղաքի աէրացիայի կայան մուտք գործող կեղտաջրերի համար (ՇՆևԿ 2-04-03-85 [14] հաշվարկի) հաստատված թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ կայանքի աշխատելու ընթացքում լինելու են մթնոլորտ կազմակերպված և անկազմակերպ արտանետումներ: Կազմակերպված արտանետումներն առաջանալու են տեխնոլոգիական պրոցեսում օգտագործվող բնական գազի օգտագործումից՝ ազոտի(NO_2/երկօքսիդ և ածխածնի(CO)օքսիդ: Իսկ անկազմակերպ արտանետումները՝ սարքավորումների անկիպություններից, ադսորբերներից և ռեգեներացումից (≈0.5%,ծծմբի երկօքսիդ՝SO_2): Առաջացած վնասակար ծխագազերը մթնոլորտ են արտանետվելու H=3 մ բարձրությամբ ծխատար խողովակով:

Գործունեության իրականացման հետևանքով արտադրամասից տարեկան արտանետումների ընդհանուր քանակը կազմելու է 3.544 տ/տարի, որից՝ ածխածնի օքսիդ՝ 3,0տ/տարի, ազոտի օքսիդներ՝ 0,5տ/տարի և սարքավորումների անկիպությունից՝ 0,0441տ/տարի ծծմբային անհիդրօքսիդներ: Ծծմբազերծման արտադրամասի հարևանությամբ, մեկ արտադրական հրապարակում (50մ հեռավորության վրա) գտնվում է աշխատած կուտակիչների վերամշակման արտադրամասը: Հաշվետվությունում հաշվարկվել է երկու արտադրամասերի համատեղ շահագործման հետևանքով մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի գումարային ազդեցությունը: Համաձայն հաշվետվության՝ համատեղ արտանետումների արդյունքում լինելու են՝ ածխածնի օքսիդի (8,19), ազոտի օքսիդների(4,18), ծծմբային անհիդրիդի(0,544), ծծմբական թթվի գոլորշու(0,25), կրափոշու(0,0068), օրգանական փոշու(0,07), կապարի փոշու(0,00803), ընդամենը 13249 տ/տարի արտանետումներ, որից «Էկո Մետալ» ՍՊԸ–ի արտանետումները կազմելու են 9,704տ/տարի:

Համաձայն հաշվետվության՝ արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով կատարվել են «Ռադուգա» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ: Համաձայն ծրագրի՝ գետնամերձ հաշվարկային կոնցենտրացիաները, ներառյալ գումարային ազդեցությունները, մթնոլորտի աղտոտվածության մակարդակը մոտակա բնակելի գոտում կազմում են՝ Խարբերդ թաղամասում՝ 0.00015÷0.0044 ՍԹԿ միավոր, «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ձեռնարկության տարածքում՝ 0.00068÷0.02 ՍԹԿ միավոր, իսկ նախագծվող արտադրամասերի ընդհանուր արդիարթակում՝ 0.0033 ÷ 0.19 ՍԹԿ միավոր: Հաշվարկվել է նաև երկու ձեռնարկությունների՝ «Էկո Քիմսինթեզ» ՍՊԸ և «Էկո Մետալ» ՍՊԸ-ի համատեղ

ազդեցությունները: Համաձայն հաշվետվության՝ մթնոլորտի աղտոտվածության մակարդակը մոտակա բնակելի գոտում կազմում են՝ Խարբերդ թաղամասում է 0.0000084 ÷ 0.014 ՍԹԿ միավոր, «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ձեռնարկության տարածքում՝ 0.000027÷0.045 ՍԹԿ միավոր: Կատարվել են հաշվարկների համեմատական ցուցանիշների վերլուծություն: Համաձայն կատարված վերլուծության՝ առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները բոլոր նյութերի համար՝ արտհարթակում, ամենամոտիկ բնակելի գոտում, մոտակա ձեռնարկության արտհրապարակում գտնվելու են թույլատրելի նորմերի սահմաններում: Գործունեության իրականացման հետևանքով՝ մթնոլորտի վրա հնարավոր ազդեցության տնտեսական վնասը կազմելու է տարեկան 39,9հազար դրամ:

Գործունեության իրականցման ընթացքում աղմուկի մակարդակը գտնվելու է թույլատրելի մակարդակում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված տրանսպորտի տեղաշարժի, թափոնների պահման, տեղափոխման, կայանքի շահագործման ընթացքում աղմուկի, մթնոլորտ ծխագազերի՝ ազոտի, ածխածնի օքսիդների արտանետման, կեղտաջրերի, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

- թափոնների գոյացման տեղերում, վերջիններիս ժամանակավոր պահպանման համար համապատասխան տարաների տեղադրում,
- թափոնների տարաների պահպանման վայրի հատակի՝ անջրաթափանց և անյուղաթափանց նյութով պատում,
- արտադրության տարածքում թափոնների հավաքման և ժամանակավոր պահման հսկողության և հաշվառման իրականացում,
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում՝ սարքավորումների գերբեռնված աշխատանքի բացառում,
- արտադրամասի հատակի կահավորում դրենաժային համակարգով՝ գրունտային ջրերն աղտոտումից պահպանելու համար,
- տեխնոլոգիական սարքավորումների հովացում՝ ջրի շրջանառու համակարգով,
- բանեցված յուղերով լցված տակառներում (5%-ից ոչ պակաս) ազատ ծավալի ապահովում՝ յուղի հնարավոր ընդարձակման համար,
- վերամշակման ենթակա հումքի և պատրաստի արտադրանքի պահում հերմետիկ մետաղյա ցիստեռներում՝ ծածկի տակ,
- արտադրամասի տարածքում փոշու, ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ազոտի օքսիդների, ծծմբային անհիդրիդի ավտոմատ չափման սարքերով նմուշառում և չափում՝ ամիսը երկու անգամ,
- աշխատակիցներին համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցների(կոշիկներ, ձեռնոց, ակնոց) տրամադրում՝ աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով,
- արտադրական հանգույցում օդափոխության, հակահրդեհային ազդանշանային համակարգերի առկայություն, հակահրդեհային հիդրանտների տեղադրում,
- արտակարգ և վթարային իրավիճակների առաջացման դեպքում՝ գործողությունների մշակում և այլն:

Մշտադիտարկումների համար նախատեսվելու է տարեկան 360 000 դրամ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեության իրականացման համար նոր տարածքներ չեն խախտվելու: Այն կատարվելու է գոյություն ունեցող արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում և ծծմբի՝ մինչև 10ppm պարունակությամբ դիզվառելիքի օգտագործումը կկրճատի դիզելային շարժիչների շահագործումից մթնոլորտ աղտոտող նյութերի արտանետումների քանակը, կնվազեցվի շրջակա միջավայրի աղտոտումը: Գործունեության իրականացման արդյունքում ստեղծվելու են նոր աշխատատեղեր: Ջրի շրջանառու համակարգի ներդրումը կրճատելու է թարմ ջրի ծախսը (97%), տնտեսելով՝ տարեկան 181.44 հազ.մ^3 ջուր:

Համաձայն հաշվետվության՝ ընկերությունն իր շահույթի որոշ մասն (900 մլն. դրամ) ուղղելու է տարածքի սոցիալական զարգացման, ինչպես նաև կրթական, առողջապահական և այլ սոցիալական բնագավառների զարգացման հնարավորությունների ուսումնասիրությանը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:

2. Հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ թույլատրելի նորմաների պահպանմանն ուղղված:

3. Բացառել բաց տարածքում թափոնների կուտակումը և պահպանումը, գարշահոտության տարածումը:

4. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված՝ ծծմբով հագեցած խտանյութի վաճառքը, բացառել որպես թափոն դրանց հեռացումը:

5.Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել բնապահպանական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷկոՔիմսինթեզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիզելային վառելիքի ծծմբազերծման արտադրամասի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան